ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2024 թվականի N 373-Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2323-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի N 580-Ա որոշման 5-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշման համապատասխան հավելվածներում 1173 «Անտառների կառավարում» ծրագրի 11001 «Անտառային ոլորտում քաղաքականության մշակման և աջակցու-

թյան ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման անվանումը փոխարինել «Էկոպարեկային ծառայություն» անվանումով, իսկ նկարագրությունը շարադրել հետևյալ կերպ.

«Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության իրականացում և համակարգում»:

1173 «Անտառների կառավարում» ծրագրի 11001 միջոցառման կատարող սահմանել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության Էկոպարեկային ծառայությանը: 31001 «ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի տեխնիկական կարողությունների ընդլայնում» միջոցառման անվանումը փոխարինել «Էկոպարեկային ծառայության տեխնիկական կարողությունների ընդլայնում» անվանումով՝ միջոցառման կատարող սահմանելով շրջակա միջավայրի նախարարության Էկոպարեկային ծառայությանը: 1155 «Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում» ծրագրի անվանումը, նպատակն ու վերջնական արդյունքի նկարագրությունը և դրա 11004, 11005, 11006, 11007, 11008, 11010 միջոցառումների անվանումները և նկարագրությունները, ինչպես նաև 1173 «Անտառների կառավարում» ծրագրի 11002 միջոցառման անվանումը և նկարագրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի: 1173 «Անտառների կառավարում» ծրագրի՝ 11002 «Անտառպահպանական ծառայություններ», 11003 «Անտառների կադաստրի վարում», 11004 «Անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքար», 32001 «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ» միջոցառումների կատարող սահմանել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը:

2. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածների աղյուսակներում կատարել փոփոխություններ, N 1 հավելվածի NN 2 և 7.2 աղյուսակներում կատարել վերաբաշխում, փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին»

N 2323-Ն որոշման NN 2, 3, 4, 5, 6, 9 և 9.1 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ